Հավելված՝
Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի նախագահի
17.07.2015 թվականի թիվ 111-Լ հրամանի
Արա Զոհրաբյան

ՏԵԽՆԻԿԱԿԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻՑ ՕԳՏՎԵԼՈՒ ԵՎ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի **(այսուհետև՝ ՀՀ փաստաբանների պալատ)** համակարգիչներից օգտվելու և էլեկտրոնային հաղորդակցության սույն կարգը **(այսուհետև՝ Կարգ)** սահմանում է ՀՀ փաստաբանների պալատի սեփականությունը հանդիսացող համակարգիչներից օգտվելու իրավունքները, սահմանափակումները, պարտականությունները, արգելքները, գաղտնիությանը և պատասխանատվությանը վերաբերող ընթացակարգերը:
2. Կարգը պարտադիր է բոլոր օգտատերերի համար:
3. Համակարգչի, էլեկտրոնային փոստի և այլ էլեկտրոնային միջոցների տրամադրման նպատակն է ՀՀ փաստաբանների պալատում աշխատանքի արդյունավետ կազմակերպումը:
4. ՀՀ փաստաբանների պալատը իր աշխատակիցների հետ փաստաթղթաշրջանառությունը կարող է իրականացնել՝

1) ՀՀ փաստաբանների պալատի կայքէջում նյութերի (փաստաթղթերի) տեղադրման միջոցով, ընդ որում՝ սույն եղանակով ծանուցումը համարվում է պատշաճ փաստաթղթի (նյութի) ներբեռնման հնարավորության ստեղծման պահից,
2) աշխատակցի էլեկտրոնային փոստին կամ հատուկ համակարգի միջոցով նյութն ուղարկելու եղանակով, ընդ որում՝ սույն եղանակով ծանուցումը համարվում է պատշաճ նյութի՝ ուղարկման պահից,
3) աշխատակցին նյութն առձեռն հանձնելու եղանակով, ընդ որում՝ սույն եղանակով ծանուցումը համարվում է պատշաճ նյութի՝ հանձնման պահից:

5. Կարգում տեղ գտած ներքոհիշյալ հասկացություններն ունեն հետևյալ իմաստը (նշանակությունը).

1) **օգտատերեր՝** ՀՀ փաստաբանների պալատի աշխատակազմի անդամներ, վերապատրաստում անցնող փաստաբաններ, դասախոսներ, ՀՀ փաստաբանների

պալատի համակարգիչներից օգտվող այլ անձինք,

2) **աշխատակից՝** ՀՀ փաստաբանների պալատի հետ աշխատանքային հարաբերությունների մեջ գտնվող ֆիզիկական անձ,
3) **ադմինիստրատոր (վարչավար)՝** տեղեկատվական տեխնոլոգիաների մասնագետ: Մինչև համապատասխան աշխատակցի ներգրավումը՝ վարչատնտեսական դեպարտամենտի ղեկավար,
4) **էլեկտրոնային փոստ՝** ՀՀ փաստաբանների պալատի կողմից տրամադրված էլեկտրոնային փոստ:

II. ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԵՎ ՕԳՏԱՏԵՐԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐԸ

6. Օգտատերերին հասանելի են ՀՀ փաստաբանների պալատի տարբեր տեխնիկական միջոցները, որոնք անհրաժեշտ են վերջիններիս աշխատանքային և (կամ) այլ գործառույթների, պարտականությունների կատարման համար: Տեխնիկական միջոցներն ըստ անհրաժեշտության աշխատակիցներին տրամադրում է ՀՀ փաստաբանների պալատի վարչատնտեսական դեպարտամենտը:
7. ՀՀ փաստաբանների պալատը չի խրախուսում, որ օգտատերերը պահպանեն աշխատանքի հետ չառնչվող տեղեկատվություն ՀՀ փաստաբանների պալատին պատկանող տեխնիկական միջոցներում և չի երաշխավորում դրանց գաղտնիությունը և պահպանությունը:
8. ՀՀ փաստաբանների պալատը, ելնելով անվտանգության և այլ նկատառումներից, կարող է գրանցել և պահպանել բոլոր էլեկտրոնային գործողությունները, այդ թվում՝

1) բոլոր հեռախոսազանգերի ելքային և մուտքային ժամանակահատվածի տևողությունը,
2) ՀՀ փաստաբանների պալատի կողմից տրամադրված էլեկտրոնային փոստը, բացառությամբ ՀՀ փաստաբանների պալատի աշխատակից չհանդիսացող փաստաբանների, որոնց էլեկտրոնային փոստի տեղեկությունները գաղտնի են,
3) բոլոր ֆաքսիմիլային փոխանցումների ուղարկած և ստացած օրինակները,
4) յուրաքանչյուր էլեկտրոնային փաստաթուղթ,
5) այցելած ինտերնետային (համացանցային) կայքէջերը:

9. ՀՀ փաստաբանների պալատը չի երաշխավորում էլեկտրոնային փոստի հաղորդագրությունների անվտանգությունը, բայց իրենից կախված բոլոր միջոցները ձեռնարկելու է անվտանգությունն ապահովելու համար:

III. ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՐԳԵԼՔՆԵՐ

10. Օգտատերերը համացանցի ծառայություններից պետք է օգտվեն միայն գործնական նպատակով:
11. Օգտատերերը պարտավոր են տեխնիկական միջոցները պահել մաքուր վիճակում, միջոցներ ձեռնարկել դրանց վրա հեղուկ, պինդ ֆիզիկական վիճակի նյութեր լցնելուց կամ որևէ կերպ փչացնելուց, կեղտոտելուց, օգտագործման համար ոչ պիտանի դարձնելուց:
12. Ցանկացած խնդրի ի հայտ գալու կամ տեղեկատվական տեխնոլոգիայի, տեխնիկական միջոցի ցանկացած խափանման դեպքում օգտատերը պարտավոր է անմիջապես իրազեկել ադմինիստրատորին:
13. Խիստ գաղտնի տեղեկատվությունը չպետք է ուղարկել էլեկտրոնային փոստի միջոցով:
14. Օգտատերերը չպետք է ներբեռնեն այնպիսի կայքէջեր, ինչպես նաև պատճենահանեն, փոխանցեն, ստանան կամ պահպանեն այնպիսի հաղորդագրություններ, որոնք պարունակում են տեղեկատվություն, ինչպիսին են՝
    1) ահաբեկչության քարոզում (որոնք ցուցադրում են ահաբեկչական նյութերի, սարքավորումների պատրաստում),
    2) թմրամիջոցների, հոգեներգործուն նյութերի պատրաստում կամ օգտագործում,
    3) անօրինական, պոռնոգրաֆիական, զրպարտչական, վիրավորական, նվաստացուցիչ կամ այլ նմանատիպ տեղեկատվություն,
    4) ՀՀ փաստաբանների պալատի կանոնադրական նպատակներին հակասող տեղեկատվություն:
15. Բացառությամբ տեղեկատվական և տեխնիկական անվտանգության, ինչպես նաև սարքինության ապահովման դեպքերի, որոնք կարող են իրականացվել ՀՀ փաստաբանների պալատի կողմից, արգելվում է զբաղվել կամ փորձել զբաղվել՝

1) այլ օգտատերերի կամ երրորդ անձանց էլեկտրոնային հաղորդակցության վերահսկմամբ,
2) համակարգի կամ հաղորդակցման դաշտ մուտք գործելով,
3) այլ օգտատերերի ծածկագրերի օգտագործմամբ համակարգ մուտք գործելով,
4) համակարգչի կամ ցանցի անվտանգության միջոցների փորձարկմամբ և (կամ) վերահսկմամբ:

16. Պալատի տեխնիկական միջոցներից օգտվելիս, ինչպես նաև աշխատանքի վայրում արգելվում են վիրավորական, ռասայական, սեռական, կրոնական անարգանք պարունակող, բացահայտ սեռական բնույթի հաղորդագրությունները:

17. Արգելվում է այնպիսի գործողությունների կատարումը կամ անգործության դրսևորումը, որը կհանգեցնի ցանցի գործառութային խանգարման:

IV. ԳԱՂՏՆԻՈՒԹՅՈՒՆ

18. Օգտատերերը պետք է հարգեն այլ անձանց էլեկտրոնային հաղորդակցությունների գաղտնիությունը:
19. Օգտատերերը պարտավոր են պահպանել ծածկագրերի գաղտնիությունը:

V. ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ

20. ՀՀ փաստաբանների պալատը պատասխանատվություն չի կրում՝

1) կորած, վնասված, փչացած, փոփոխության ենթարկված, հայտնաբերված կամ չարաշահված որևէ անհատական տեղեկատվության համար, որը փոխանցվել կամ պահպանվել է ՀՀ փաստաբանների պալատին պատկանող տեխնիկական միջոցներով,
2) կորած կամ հասցեատիրոջը չհասած էլեկտրոնային փոստի, ձայնային փոստի կամ որևէ անհատական տեղեկատվության պահպանման համար:

21. Ցանկացած հաղորդագրության կամ տեղեկատվության համար, որը ստեղծվում և (կամ) պահպանվում է ՀՀ փաստաբանների պալատին պատկանող տեխնիկական միջոցներով ՀՀ փաստաբանների պալատը պատասխանատվություն չի կրում:
22. Ցանկացած օգտատեր, ով չարաշահում է իր իրավունքները, այն է՝ ապօրինի մուտք է գործում էլեկտրոնային փոստ կամ համացանց, դիտավորյալ խախտում է սարքավորումների, ցանցային անվտագության և ծրագրերից օգտվելու կանոնները, ենթակա է պատասխանատվության:

VI. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

23. Կարգն ուժի մեջ է մտնում 2015 թվականի հուլիսի 20-ից և գործում է անժամկետ:
24. Կարգում փոփոխություններ և (կամ) լրացումներ կարող են կատարվել միայն ՀՀ փաստաբանների պալատի նախագահի կողմից:
25. Կարգի պահպանման նկատմամբ հսկողությունն իրականացնում է ՀՀ փաստաբանների պալատի աշխատակազմի ղեկավարը: